ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում, վերջին տարւայ ընթացքում, ոչ մի աչքի ընկնող գիրք լոյս չի տեսել: Խանջեանի շրջանում ծրագրւած գործերը — Հանրագիտական բառարան, Մելքոնեան փոնտ, վաւերագրերի եւ ժողովրդական բանահիւսութեան նիւթերի, նոր դասագրքերի հրատարակութիւնը կանգնեցւած է, իբրեւ «ազգայնական-հակայեղափոխական» գործ, իսկ նոր գործեր դեռ մէջտեղը չկան: Մելքոնեան փոնտի կենտրոնական հիմնարկութիւնը լուծւած է եւ ամբողջ գործը կենտրոնացւած է կառավարութեան ձեռքին, որով փաստօրէն վերջ է տրւում այնքան օգտաշատ գիտական հատորների շարքին: Անցեալում լոյս տեսած մի շարք դասագրքեր ու գրական երկեր, ինչպէս, օրինակ, Զարեանցի «Գիրք ճանապարհին», Մկ. Արմէնի «Երեւան» ու «Հեղնար Աղբիւր»-ը եւ այլն, արգելւած են. գրականութեան եւ արւեստի ուիրւած պարբերականները՝ «Խորհրդ. գրականութիւն», «Խորհրդ. Արւեստ», «Գրական Թերթ» դարձել են անրովանդակ ու խեղճ հրատարակութիւններ, որոնք կամ ռուսական թերթերից արտատպումներով են լեցւում, կամ գրւում է՝ ինչ որ վերեւից է հրահանգւում: Ինքնուրոյն դատողութիւն, սեփական միտք, ազատ խօսք — նշոյլն իսկ գոյութիւն չունի: Պետհրատն էլ մաքրւել ու վերակառուցւել է՝ կենդանի գործի անընդունակ դառնալու աստիճան: Հայոց տպագրական խօսքի պատմութիւնը ամայութիւն պիտի գտնէ Հայաստանում վերջին տարեշրջանի ընթացքում:

ՐԱՖՖԻ ԵՐԿԵՐԸ

Րաֆֆին ամենաբեղուն հայ գրողներից մէկն էր, եթէ ոչ ամենէն բեղունը: Իսկ տպագրւած երկերի քանակի տեսակէտից, կարելի է ասել, նա մրցակից չունի: Գաղափար տալու համար, թէ Րաֆֆիի գործերը ինչքան են ժողովրդական, առաջ բերենք այն ցանկը, որ այրի Տիկ. Աննա Րաֆֆին զետեղել է «*Տաճկահայք*»-ի երկրորդ տպագրութեան յաւելւածում (Վիեննա, 1913): Այս ցանկը արժէքաւոր է եւ ժամանակագրութեան հաստատման տեսակէտով:

Րաֆֆիի ողջ եղած ժամանակ առանձին գրքով լոյս են տեսել նրա հետեւեալ երկերը, իւրաքանչիւրը 1200 օրինակ: Աւելի տպւածների թիւը նշանակւած է առանձին:

1.– 1874 թ.ին՝ «*Փունջ*», Ա. հատոր, Թիֆլիս, 1500 օրինակ:

2.– 1874 թ.՝ «*Փունջ*», Բ. հատոր, Թիֆլիս, 1500 օրինակ:

3.– 1880 թ.՝ «*Խենթը*», Շուշի:

4.– 1881 թ.՝ «*Դաւիթ – Բէկ*», Ա. հատոր, Թիֆլիս:

5.– 1882 թ.՝ «*Դաւիթ – Բէկ*», Բ. հատոր, Թիֆլիս:

6.– 1882 թ.՝ «*Խամսայի Մելիքութիւնները*», Թիֆլիս:

7.– 1882 թ.՝ «*Ոսկի Աքաղաղ*», Թիֆլիս:

8.– 1882 թ.՝ «*Ղարաբաղի աստղաբէտը*», Թիֆլիս:

9.– 1883 թ.՝ «*Կայծեր*», Ա. հատոր, Թիֆլիս:

10.– 1883 թ.՝ «*Խաչագողի յիշատակարանը*», Ա. եւ Բ. մասն, Թիֆլիս:

11.– 1883 թ.՝ «*Խաչագողի յիշատակարանը*», Գ. եւ Դ. մասն, Թիֆլիս:

12.– 1884 թ.՝ «*Զալալէդդին*», Մոսկուա, 2000 օրինակ:

13.– 1884 թ.՝ «*Կայէնի կտակը*», Թիֆլիս:

14.– 1884 թ.՝ «*Պսակ*» (ժողովածու), Թիֆլիս:

15.– 1887 թ.՝ «*Կայծեր*», Բ. հատոր, Թիֆլիս:

16.– 1888 թ.՝ «*Սամուէլ*», Ա., Բ. եւ Գ. հատոր, Թիֆլիս, 1800 օրինակ:

Այս բոլոր գրքերը հրատարակուել են Բաֆֆիի սեփական միջոցներով, բացի «*Կայծեր*»-ից, որին մեկենաս է հանդիսացել գնդ. Մելիք – Հայկազեանը, եւ «*Խենթ*»-ից, որ տպուել է Աբել Աբրեսեանի ծախսով:

Բաֆֆիի մահից յետոյ, նրա կնոջ Տիկին Աննայի հոգածութեամբ լոյս են տեսել հետեւեալ հատորները, իւրաքանչիւրը 2400 օրինակ:

1.– 1889 թ.՝ «*Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը*» (արտատպուած «Մշակ»-ից), Թիֆլիս:

2.– 1890 թ.՝ «*Մինն այսպէս, միւսն այնպէս*» (տպուած ձեռագրից, պատկերազարդ), Թիֆլիս:

3.– 1890 թ.՝ «*Խենթը եւ Զալալէդդին*», Մոսկուա, Բ. տպագրութիւն (3000 օրինակ):

4.– 1891 թ.՝ «*Դաւիթ Բէկ*», Ա., Բ. եւ Գ. հատոր, վերջաբանով, Բ. տպագրութիւն, Թիֆլիս:

5.– 1891 թ.՝ «*Կայծերի վերջը*» (ձեռագրից), Թիֆլիս:

6.– «*Վէպիկներ եւ պատկերներ*», Ա. հատոր (ձեռագիր եւ արտատպութիւն), Թիֆլիս:

7.– 1892 թ.՝ «*Կայծեր*», Ա. հատոր, Բ. տպագրութիւն, Թիֆլիս:

8.– 1893 թ.՝ «*Վէպիկներ եւ պատկերներ*» (ձեռագիր եւ արտատպած), Թիֆլիս:

9.– 1893 թ.՝ «*Արծիւ Վասպուրականի*» (ձեռագիր եւ արտատպութիւն), Թիֆլիս:

10.– 1893 թ.՝ «*Պարոյր Հայկազն*», Թիֆլիս:

11.– 1893 թ.՝ «*Ո՞վ էր մեղաւորը*», Թիֆլիս:

12.– 1893 թ.՝ «*Ֆրիդոլին*», Թիֆլիս:

13.– 1894 թ.՝ «*Խամսայի Մելիքութիւնները*», Բ. տպագրութիւն, Թիֆլիս:

14.– 1894 թ.՝ «*Զահրումար*» (ձեռագիր), Թիֆլիս:

15.– 1895 թ.՝ «*Խաչագողի յիշատակարանը*», Բ. տպագրութիւն, Թիֆլիս:

16.– 1895 թ.՝ «*Տաճկահայք*» (արտատպութիւն), Թիֆլիս:

Բացի այդ, այրի Տիկ. Աննա Բաֆֆիի միջոցներով, Վիէննայի Մխիթարեան տպարանից լոյս են տեսել հետեւեալ հատորները, իւրաքանչիւրը 3000 օրինակ.–

1.– 1898 թ.՝ «*Սամուէլ*», Ա., Բ., Գ. հատոր, Բ. տպագրութիւն:

2.– 1903 թ.՝ «*Դաւիթ – Բէկ*», Ա., Բ., Գ. հատոր, Գ. տպագրութիւն:

digitised b

3.– 1903 թ.՝ *«Ոսկի Աքաղաղ»*, Բ. տպագրութիւն:

4.– 1904 թ.՝ *«Կայծեր»*, Ա. հատոր, Գ. տպագրութիւն:

5.– 1904 թ.՝ *«Կայծեր»*, Բ. հատոր եւ վերջ, Բ. տպագրութիւն:

6.– 1905 թ.՝ *«Խաչագողի յիշատակարանը»*, Ա., Բ., Գ. եւ Դ. մասն, Գ. տպագրութիւն:

7.– 1905 թ.՝ *(Խենթը եւ Զալալէդդին»*, Գ. տպագրութիւն:

8.– 1905 թ.՝ *«Զալալէդդին»*, Դ. տպագրութիւն:

9.– 1906 թ.՝ *«Խամսայի Մելիքութիւնները»*, *«Ղարաբաղի Ատղագէտը»*, *«Գաղտնիքն Ղարաբաղի»* — առաջինը Գ. տպագրութիւն, երկրորդը՝ Բ. տպագրութիւն, երրորդը՝ արտատպութիւն «Արձագանգ»-ից. մի հատորի մէջ:

10.– 1911 թ.՝ *«Մալրիկ»*, Ա. հատոր, ձեռագիր:

11.– 1912 թ.՝ *«Պարսկական պատկերներ»* (նոր շարադասութեամբ, ձեռագիր եւ արտատպութիւն):

12.– 1913 թ.՝ *«Տաճկահայք»* (նոր շարադասութեամբ, ձեռագիր եւ արտատպութիւն), Բ. տպագրութիւն:

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Հ. Բ. Ը. Միութեան Նուպարեան Մատենադարանը հետզհետէ կը ճոխանայ հատորներով եւ մեր ժամանակակից պատմութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող վաւերագիրներով: 1935-ին տրամադրուած 481 կտորի տեղ, 1936-ի մուտքը եղած է 2927 կտոր՝ հետեւեալ կերպով բաժնուած.— 1923 զանազան հատորներ, 73 հաւաքածոյ լրագիրներու եւ պարբերականներու, 63 պատկեր, լուսանկար, քարտ, հայ երաժշտական նօթագրութիւն, եւ այլն, 6 հին գրչագիր եւ 1688 նամակ, ձեռագիր եւ ինքնագիր աշխատութիւն: Ասոնց մեծ մասը նէր տրուած է, ուրիշներ գնուած են եւ ոմանք ալ փոխանակուած կրկնակներու հետ:

Ամենէն կարեւոր նուիրատուութիւնները ըրած են Երեւան (148 հատոր), Տ. Պ. Էմէրեան (79 հատոր) եւ 2 հին գրչագիր, Տ. Լ. Բաշալեան (66 հատոր), Հ. Բ. Ը. Միութեան կեդր. վարչութիւնը (48 հատոր), Գ. Սինապեանի ժառանգութենէն 135 հատոր պարսկերէն եւ արաբերէն: Նուիրատուներէն չորսը օտարականներ են՝ Մ. Քրբաքիր – Պոնար, Մոսքուայի վոռքսը, Մ. Պալթրուշայթիս եւ Մ. Հ. Լրոուա:

Մատենադարանին վարչութիւնը անդուլ ջանք ի գործ կը դնէ աւելցնելու համար հայ ժամանակակից պատմութեան վերաբերեալ վաւերագիրներու հաւաքածոն, որ հիմակուց արդէն մեծ արժէք մը կը ներկայացնէ եւ գնահատելի աղբիւր մըն է պատմութեան համար: Նորստաց գրութեանց մէջ յիշենք 1348 պատմական վաւերաթուղթ, հանգուցեալ Յովհաննէս փաշա Գոյումճեանի ինքնագիր ցիշատակները, 324 նամակ զանազան անձերէ՝ Տ. Վ. Մալէզեանի կողմէ յանձնուած, 4 վաւերաթուղթ Տ. Լ. Կերտանէ, եւն.:

1936-ին Հ. Բ. Ը. Միութեան կողմէ Նուպարեան Մատենադարանին համար ծախսուած գումարն է 679 անգլ. ոսկի:

A.R.A.R.@